
ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԱՆՎԱՆԻ ԳՈՐԾԻՉՆ ՈՒ ԳԻՏՆԱԿԱՆԸ
(Մաղաքիա Օրմանյանի ծննդյան 170-րդ տարելիցի առթիվ)

ԿՈՍՏԱՆԴՅԱՆ Է. Ա.

XIX դ. վերջի և XX դ. սկզբի հայ եկեղեցու և հասարակական-քաղաքական կյանքի ականավոր դեմքերից է Մաղաքիա Օրմանյանը՝ հոգևորականի տեսական գիտելիքների հսկա պաշարով եզակի մի անձնավորություն, հայ եկեղեցու նվիրյալ սպասավոր:

Ծնվել է 1841 թ. փետրվարի 11-ին Կ. Պոլսի Բերա թաղամասում, հռոմեադավան ընտանիքում: Հայրը դեղագործ Անտոն Օրմանյանն էր, մայրը՝ Եղիսաբեթ Միասերյանը: Նախնական կրթությունը Կ. Պոլսում ստանալուց հետո տասնամյա Պողոսը (ավագանի անունն է) մեկնում է Հռոմ և ընդունվում տեղի Անտոնյան միաբանության Ս. Լուսավորչի վանքը: 1855 թ. դեկտեմբերի 25-ին նորընծա է օրհնվում և վերանվանվում Մաղաքիա: Երեք տարի անց կրոնավոր է դառնում, կոչվում եղբայր Մաղաքիա: Սովորում է Վատիկանի դպրոցի ճարտասանության դասարանում, իսկ 1858 թ. ուսումը շարունակում է Սուրբ Ապոլինարի դպրոցում: 1860 թ. ավարտում է Հռոմի հոգևոր ուսումնական հաստատությունները, ստանում իմաստասիրության, աստվածաբանության, եկեղեցական իրավագիտության մագիստրոսի կոչում, ընտրվում Հռոմի աստվածաբանական կաճառի անդամ: Հռոմում նա եռանդուն մասնակցություն է ունենում հակահատույնյան պայքարին, դիմագրավում հռոմեադավան հայությանը կաթոլիկության մեջ ձուլելու քաղաքականությանը: Պապականության դեմ մղած պայքարի արտահայտություն են դառնում «Հայ արևելեան կաթողիկեայք» (1870) և «Ռեվերսուրուս կամ Հայք և պապութիւն» (1872) աշխատությունները (իտալերեն): Դրանց գաղափարական շարունակությունը եղան «Արևելյան կաթոլիկաց կրոնական ազատութիւնը և քաղաքական իրավունքները» (1872) և «Վատիկան և Հայք» գործերը (1873)՝ ֆրանսերեն: Սրանք անցան պապական արգելված գրքերի շարքը: Օրմանյանի գաղափարների ձևավորման վրա մեծ ազդեցություն ունեցավ Իտալիայի ազգային հերոս Գարիբալդիի հետ հանդիպումը 1875 թ., Հռոմում: 1876 թ. Օրմանյանը վերադառնում է Կ. Պոլիս և որոշում վերջնականապես իր կապերը խզել Վատիկանից, ընդգրկվել հայ եկեղեցու մեջ. «Հռոմադաւանութենէ հեռանալու միտքը իմ վրայ ոչ կիրքի մը վայրկենական որոշում և ոչ շահադիտութեան կեղծիք էր, այլ երկար ատեն խորհուած և կշռուած, և խոհական քայլերով յառաջացած գործ մը եղած է՝: Այդ հաստատուն գաղափարներով 1877 թ. փետրվարին Օրմանյանը խնդրանքով դիմում է Կ. Պոլսի հայոց պատրիարք Ներսես Վարժապետյանին: Վերջինս արդեն տեղյակ էր նրա ազգասիրական-հայասիրական գործերին, ելույթներին, խորհուրդ է

¹ **Օրմանեան Մ.**, *Խոհք և խօսք (յետմահու հրատարակութիւն), Երուսաղէմ, 1929, էջ 6:*

տալիս մնալ իր տեղում (հռոմեադավանների շրջանում) և «խմորել»: Մոտ երեք տարի դեռևս հռոմեադավան Օրմանյանը աշխատում է իբրև Ղալաթիայի Ազգային մատենադարանի տեսուչ: 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո արևմտահայության մեջ տիրող ոգևորությունն առիթ է դառնում ազգասիրական բազմաթիվ ձեռնարկների: Ուշադրության կենտրոնում էին Օրմանյանի ազգային թեմաներով կարդացած բանախոսությունները. 1879 թ. հունվարի 8-ին Օրթագյուղում Օրմանյանի դասախոսությունը՝ «Հայուն անցեալն ու ներկայն ու ապագայն» թեմայով մեծ ընդունելություն գտավ և «Մասիսի» մեջ հրատարակվեց: Այդ շարքը շարունակվեց մեկը մյուսից հետաքրքիր թեմաներով. «Հայութեան հոգին», «Հայ երիտասարդութիւն», «Հայ ազգութիւն», «Կարօտ եմք»: Ուսկյուտարում, Մամաթիայում և Օրթագյուղում կարդացած այդ դասախոսություններն ապացուցեցին, որ դրանց հեղինակն արդեն հոգով հայադավան էր: Հայ եկեղեցու գիրկը դառնալը պարզապես պետք է լինէր հանդիսավոր ձևականություն, որը գրեթե «ժողովրդական ցույցի» կերպարանքով տեղի ունեցավ 1879 թ. հոկտեմբերի 28-ին²: Իր հետ հայ եկեղեցի վերադարձան 75 հոգի (30 կին, 45 տղամարդ): Այդ իրադարձությանը բարձր գնահատական է տվել Հ. Միրունին՝ այն համարելով բացառիկ երևույթ. «Հայ եկեղեցին միակ շաղախն էր դեռ այն օրերուն՝ հայ ավանդություններով թրծելու համար հայ ժողովրդի ցանուցրիվ զավակները»³: Քանի որ, հռոմեադավան եկեղեցում Օրմանյանն արդեն օծվել էր վարդապետ, հայ առաքելական եկեղեցում նա ստանում է ծայրագույն վարդապետության աստիճան և կարգվում Ղալաթիայի Ս. Լուսավորիչ վանքի քարոզիչ: Նրա՝ ազգային-հոգևոր գործունեություն ծավալելու հարցում մեծ դեր է խաղում պատրիարք Ներսես Վարժապետյանը, որի ջանքերով 1880 թ. ապրիլի 2-ին Օրմանյանն ընտրվում է Կարինի (Էրզրումի) հոգևոր առաջնորդ: Մայիսի վերջին նա արդեն Կարինում էր:

Սան-Մտեֆանոյի պայմանագրի հետ կապված ազատության հույսերը ի դերն ելան Բեռլինի վեհաժողովի 61-րդ հոդվածով: Արևմտահայությունն զգաց, որ «Եվրոպան դավեր ու դավաճաներ էր իրեն՝ զինքը դարձյալ մինակ ձգելով իր ցավերուն և հուսահատութեան մեջ»⁴: «Մարդ ինքն իրմեն պետք է աշխատի, որ փրկուի», և «Երկաթե շերեփի» խրիմյանական քարոզները դարձան ժամանակի ազգային գործիչների և երիտասարդության կարգախոսը: Դրանց առաջին արձագանքները եղան Արևմտյան Հայաստանի տարբեր վայրերում ստեղծված ազգային-ազատագրական նպատակներ հետապնդող գաղտնի ընկերություններն ու կազմակերպությունները, որոնց մեջ իր ուրույն տեղն ունի Կարինի «Պաշտպան հայրենյացը»:

² Միրունի Հ., Օրմանյան և իր ժամանակը (Էջմիածին, 1961, N 5, էջ 42):

³ Նույն տեղում:

⁴ Նույն տեղում, N 6, էջ 16:

Դեռ հազիվ մեկ տարի էր, որ Օրմանյանը գտնվում էր Կարինում, երբ տեղի երիտասարդները 1881 թ. մայիսին հիմնում են «Պաշտպան հայրենյաց»⁵ անունով գաղտնի կազմակերպությունը, որի ստեղծման նախաձեռնողն էր արհեստավոր Խաչատուր Կերեքցյանը՝ Կարապետ և Հակոբ Նշկյանների, Հակոբ Էթալիկյանի, Հովհաննես Աստուրյանի, Եղիշե Տուրսունյանի գործակցությամբ: Ինքը՝ Օրմանյանը, հետագայում «Ազգապատումի» Գ հաստորում այդ կազմակերպության նպատակը համարում էր «զինեալ քուրդին և չերքեզին բռնութեանց» զենքով պատասխանելը՝ ժխտելով հակակառավարական որևէ նպատակ հետապնդելը: «Պաշտպան հայրենյացը» սկսում է եռանդուն գործունեություն ծավալել: Մկրտիչ Խրիմյանի միջոցով հարաբերություն է հաստատում այդ ժամանակ Վանում ստեղծված «Մև խաչ» գաղտնի կազմակերպության հետ. անդամներից մեկը մեկնում է Կ. Պոլիս, պատրիարք Ներսես Վարժապետյանին տեղեկացնում իրենց մասին, ցույց տալիս անդամատոմսերը, որոնք վերջինս պատվիրում է անհապաղ ոչնչացնել, ոստիկանության ձեռքը չընկնելու համար: Մի այլ անդամ մեկնում է Թիֆլիս՝ Գրիգոր Արծրունու հետ հարաբերություններ հաստատելու համար: Այդ բոլոր գործիչները խրախուսելով կազմակերպության անդամներին՝ խիստ հրահանգ են տալիս գործել արտակարգ զգուշությամբ: Մակայն այդ կազմակերպչական աշխատանքների ընթացքում՝ 1882 թ. նոյեմբերին ոստիկանությունը պատահաբար բացահայտում է «Պաշտպան հայրենյացը»: Ձերբակալվում են 72 հոգի, բոլորն էլ՝ արհեստավոր: Կասկածի տակ է ընկնում նաև Մաղաքիա Օրմանյանը: Նա պատրիարքարանի հանձնարարությամբ իբրև քննիչ մեկնել էր Մշո, Ալաշկերտի և Բասենի վանքերը և նոր էր վերադարձել Կարին: Ջգալով, որ իրեն կասկածում են, կասկածները ցրելու և ձերբակալվածներին օգնելու նպատակով 1883 թ. մարտի 24-ին նա շտապում Կ. Պոլիս⁶: Չնայած Մ. Օրմանյանի՝ այդ կազմակերպության հետ առնչություն ունենալու ժխտումներին, ժամանակակիցները գիտեին նրա կազմակերպչական դերի մասին: Տարիներ անց դա խոստովանում է Գրիգոր Ջոհրապը, որն իր «Ծանոթ դեմքերի» մեջ, գրաքննությունից խույս տալու, բայց ժողովրդին տեղյակ դարձնելու նպատակով գրել է. «Օրմանյան սրբազան մեր եպիսկոպոսներուն երիտասարդը և մեր երիտասարդներուն եպիսկոպոսն է»: Իսկ երիտթուրքական հեղափոխությունից հետո՝ 1912 թ. դեկտեմբերի 21-ի նիստում, երբ Կ. Պոլիսի հայոց ազգային ժողովը դատում է հրաժարական տված պատրիարքին, Ջոհրապը հանդես է գալիս դատապաշտպանի դերում, ժխտում նրա՝ սուլթան Աբդուլ Համիդին ստորկամիտ ծառայելու հանգամանքը և վկայում. «Իբրև Կարնո առաջնորդ հեղափոխական

⁵ Այդ կազմակերպության մասին մանրամասն տե՛ս **Հովհաննիսյան Ռ.**, Արևմտահայ ազգային-ազատագրական շարժումները և Կարինի «Պաշտպան Հայրենյաց» կազմակերպությունը, Ե., 1965:

⁶ Տարիներ անց Օրմանյանը զուսպ արտահայտություններով նկարագրում է «Պաշտպան հայրենյացի» գործունեության բացահայտումը և իր՝ Կ. Պոլիս մեկնելը: Խորհրդային շրջանի ականավոր պատմաբան Մ. Ներսիսյանը արխիվային փաստաթղթերի օգնությամբ ճիշտ գնահատական է տալիս այդ բոլորին, որը հաստատվում է նաև Ռ. Հովհաննիսյանի աշխատության մեջ:

գործունեություն մը ունեցավ: Անուրանալի է, որ Կարնո մեջ առաջին ցնցումը իր օրովը եղավ, ու շարժման գլուխ ինքը գտնվեցավ: Այդ պատճառով Օրմանյան սրբազան Պոլիս բերվեցավ և հարցաքննութեան ենթարկուելէ հետո հազիվ կրցավ օձիքը ազատել»⁷:

Իր նկատմամբ կասկածները ցրելուց հետո Մ. Օրմանյանը ձեռնամուխ եղավ դատապարտված հայերի ազատությունը կազմակերպելուն: 72 հոգուց դատի առաջ կանգնեցին 56-ը, որոնցից 16-ը ևս ազատվեցին, մահվան դատապարտվածների պատիժը փոխարինվեց 15, 13, 10, ապա ավելի քիչ տարիների: Ներսես Վարժապետյանի հետ միասին թափած ջանքերի շնորհիվ բանտարկվածներից ոչ մեկը սահմանված պատիժը չկրեց: Օրմանյանը երկար ժամանակ մնաց Կ. Պոլսում, սակայն իր վրա էր Կարնո առաջնորդությունը, և 1884 թ. սեպտեմբերի վերջին, առանց կարնեցիներին իմաց տալու, մտավ Կարին, շարունակեց ընդհատված աշխատանքները: 1884 թ. նոյեմբերի վերջին բանտից ազատվեցին վերջին բանտարկյալները, և հանդարտված Օրմանյանն սկսեց հովվական այցելությունները:

1886 թ. հունիսի 8-ին Գարեգին Սրվանձտյանցի հետ Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Մակար կաթողիկոսի կողմից օձվում է եպիսկոպոս: Այդ ժամանակ նրան հրավիրում են Գևորգյան ձեմարանում աստվածաբանություն դասախոսելու, սակայն նա հայոց պատրիարքարանից հանձնարարություն էր ստացել իբրև քննիչ մեկնել Վան՝ տեղի հոգևոր առաջնորդ Պողոս Մելիքյանի ապագային գործունեության պատճառով առաջացած պողոսյան-ապողոսյան վեճերը հարթելու համար: Նրան հաջողվում է ճիշտ քննություն կատարել, և Պողոս Մելիքյանն ազատվելով հոգևոր պաշտոնից՝ արքայություն է Լիմ անապատ (վանքը)⁸: Դարձյալ պատրիարքարանի հրահանգով Օրմանյանը գնում է Աղթամար՝ տեղի կաթողիկոս Խաչատուրի և միաբանության միջև եղած վեճերը հարթելու և այդ մասին զեկուցագիր ներկայացնելու համար: 1886 թ. օգոստոսին նա արդեն Կարինում էր, որտեղ շարունակում է աշխատանքները: Սեպտեմբերի 2-ին բանտից ազատվում են «Պաշտպան հայրենյացի» վերջին բանտարկյալները: Թեմական առաջնորդը զբաղվում է ոչ միայն Կարինի, այլև Թորթումի, Կիսկիմի, Սպերի վիճակներով, անձնվեր գործունեություն է ծավալում գավառահայության դրությունը բարելավելու ուղղությամբ⁹: Նոր էր Կարին վերադարձել, երբ 1887 թ. հունիսի 24-ին ստանում է Ամենայն Հայոց Մակար Թեղուտցի կաթողիկոսի կոնդակը, որով նա կանչվում էր Էջմիածին՝ ձեմարանում դասախոսի պաշտոն վարելու համար: Այդ

⁷ Էջմիածին, 1961, N 5, էջ 20:

⁸ Այդ մասին ավելի մանրամասն տե՛ս Կոստանդյան Է., Գարեգին Սրվանձտյանց (Ե.,) և նույնի՝ Մկրտիչ Խրիմյան (Ե.,) աշխատությունները:

⁹ Հետագայում՝ «Խոհք և խօսքում» Օրմանյանը գոհունակությամբ է արտահայտվում Կարինի հոգևոր առաջնորդի՝ իր գործունեության մասին՝ նշելով, որ կարնեցիները «օրհնությամբ» են հիշել այդ օրերը (Օրմանեան Մ., նշվ. աշխ., էջ 141):

գործունեությանը հետաքրքիր գնահատական է տալիս Հակոբ Միրունին՝ նշելով, որ Մակար կաթողիկոսը մի ամբողջ վիճակ թողեց առանց հոգևոր առաջ նորդի՝ մտածելով, որ ավելի լավ է մի վիճակ թողնել առանց կառավարողի, քան դրա փոխարեն պատրաստել բազմաթիվ վիճակ կառավարողներ, ապա ավելացնում է, որ Օրմանյանը «հասցուց վիճակ կառավարողներ, քայց միևնույն ատեն Կարինում ցույց տվավ, թե ինչպես պետք է վիճակ մը կառավարել»¹⁰:

Օրմանյանի կյանքում յուրահատուկ փուլ էր Էջմիածնի Գևորգյան ճեմարանում դասավանդելու շրջանը: 1874 թ. բացված Գևորգյան ճեմարանը ազգի համար պատրաստել էր ընտիր մտավորականներ, քայց ժամանակակիցների վկայությամբ՝ չէր կատարել իրեն վերապահված դերը՝ հոգևորականների նոր սերունդ կրթելը: Ճեմարանում դասավանդում էին ընտիր ուսուցիչներ, սակայն այդ հոգևոր հաստատության մեջ պակասում էին կրոնական դասերը. ցածր դասարաններում ավարտվում էր Սուրբ Գրոց պատմությունը, իսկ համալսարանական լսարաններում կրոնական առարկաներ չէին դասավանդվում: 1886 թ., երբ Օրմանյանն Էջմիածնում եպիսկոպոս էր օծվում, նրան նման առաջարկություն արվեց: Մակայն նա Կ. Պոլսի պատրիարքից հանձնարարություն էր ստացել, որի կատարման համար հրաժարվեց այդ առաջարկից: Բանակցություններ սկսվեցին Ամենայն Հայոց կաթողիկոսի և Կ. Պոլսի պատրիարքի միջև, և միայն 1887 թ. հունիսին Օրմանյանը կաթողիկոսական կոնդակով հրավիրվեց ճեմարան՝ ուսուցչական պաշտոնի: Նույն տարվա սեպտեմբերին նա արդեն աստվածաբանություն էր դասավանդում երեք լսարանում, օրական չորս ժամ: Քանի որ դասախոսության ձեռնարկ չկար, ծրագիր կազմելը վստահվեց Օրմանյանին, որը որպես դասավանդման լեզու ընտրեց գրաբարը. «Հարկ եղաւ բնական աստուածաբանութիւնը սկսիլ՝ հոգեբանութիւնն ալ խառնելով, ջատագովական ճիւղը լրացնել և տեսական ու բարոյական աստուածաբանութեանց անցնիլ, շարթական դաս մըն ալ Ավետարաններու ներածութեան յատկացուեցան երեք լսարանները համախմբելով»¹¹: Մեկ տարի Օրմանյանը ուսուցանում էր ճեմարանում, և այդ փոքր ժամանակահատվածը, որ մեծ գոհունակություն էր պատճառել կաթողիկոս Մակարին, գրգռում է ցարական պաշտոնյաների դժգոհությունը: Մի ամբողջ տարի՝ 1887 թ. օգոստոսի վերջից, այսինքն, Օրմանյանի՝ Էջմիածին գալուց սկսած, ցարական պաշտոնյաները բանակցություններ են վարում հայոց կաթողիկոսի հետ, նրան ճեմարանի դասախոսի պաշտոնից հեռացնելու համար: Սկզբում բանակցություններ վարողը Մինոդի դասախոս Կանչելին էր, որը կաթողիկոսին հանձնարարում է հեռացնել Օրմանյանին՝ պատճառաբանելով նրա՝ ռուսահպատակ չլինելը: Մակարը չի կատարում այդ «խնդրանք» - հրամանը. նա մեծ հույսեր էր կապում Օրմանյանի հետ՝ համոզված, որ վերջինիս դասախոսությունները տալիս են հոգևոր ճեմարանին անհրաժեշտ

¹⁰ Միրունի Հ., նշվ. աշխ., էջ 18:

¹¹ Օրմանեան Մ., նշվ. աշխ., էջ 144:

աստվածաբանական գիտելիքներ, և ծրագրել էր մյուս ուսումնական տարում ընդլայնել այդ առարկաների շարքը: Մակայն կաթողիկոսի ծրագրերը մնացին թղթի վրա: Մակար Թեղուտցու հետ բանակցություններ սկսեց Կովկասի կառավարչապետ Դոնդուկով-Կորսակովը: Կաթողիկոսն այս անգամ չանսաց նույնիսկ Կովկասի կառավարչապետի հրահանգին: Ուսումնական տարվա վերջին՝ հունիս ամսին, գործին միջամտում է ցարական արքունիքը. Ռուսաստանի ներքին գործերի մինիստրության գաղտնի խորհրդական Գիրսը, իրեն օգնական ունենալով հոգևոր գործերի դեպարտամենտի աշխատակից, ցարական արքունիքի կամեր-յունկեր, տիտղոսավոր (ՅևՅցսյՎոտ) խորհրդական իշխան Ուրուսովին, գալիս է Հայաստան՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում հանդիպումներ ունենում Ամենայն Հայոց կաթողիկոսի հետ՝ նրան ստիպելով «սեփական նախաձեռնությամբ Ռուսաստանի սահմաններից արտաքսել Օրմանյան եպիսկոպոսին»¹²: Մեր կարծիքով, այդ բոլորի պատճառը Կարինի «Պաշտպան հայրենյաց» կազմակերպության հետ Օրմանյանի հարաբերություններն էին: Այսպիսով, ցարական արքունիքին հաջողվեց Օրմանյանին հեռացնել Էջմիածնից:

Մակայն Գևորգյան ձեմարանում Օրմանյանի թողած հետքը նշանակալից էր: Հայ եկեղեցու անվանի գործիչները, որ սովորել էին ձեմարանում, հետագայում նրան համարեցին իրենց հոգևոր հայրը և ուսուցիչը: Կ. Պոլսում, Կեղրոնական վարժարանում Օրմանյանը մի կարճ ժամանակ վարեց կրոնագիտության ուսուցչի պաշտոնը:

1888 թ. սեպտեմբերին Կ. Պոլսի պատրիարք ընտրված Խորեն Աշրգյանը գումարեց եպիսկոպոսների հավաք, որտեղ առաջարկեց եկեղեցու բարեկարգության զանազան մեթոդներ: Օրմանյանն արտահայտեց իր կարծիքը. եկեղեցու բարեկարգությունը ձեռնարկելուց առաջ անհրաժեշտ է զարգացած և կրթված հոգևորականություն պատրաստել: Ընդունվեց հենց այդ տեսակետը: Սկզբից մտածեցին Կ. Պոլսում դպրեվանք բացել, հետո ամենահարմար վայրը համարեցին Արմաշի վանքը, որը մոտիկ էր Պոլսին, և նրա վանահայրն էր նորընտիր պատրիարքը: Այդ վանքը երեք դար արդեն գոյություն ուներ (XVII դարից) և միշտ էլ կրթական օջախ է եղել: Հայ մեծահարուստ Աբիկ Ունճյանի օգնությամբ իրականացավ Արմաշի դպրեվանքի հիմնարկեքը: 1889 թ. սեպտեմբերի 18-ին Մաղաքիա Օրմանյանն սկսեց իր գործունեությունն Արմաշում, առաջին տարին մենակ՝ առանց աջակից ունենալու, երկրորդ տարին Օրմանյանին միացավ երիտասարդ վարդապետ Եղիշե Դուրյանը, որը տասը տարի ուսուցչություն էր արել Պարտիզակում և հռչակվել այդ

¹² ՀՀ ազգային արխիվի N 56 ֆոնդում մեր հայտնաբերած նորահայտ փաստաթղթերը վկայում են ցարական արքունիքի՝ Օրմանյանի նկատմամբ ցուցաբերած բացասական վերաբերմունքը (տե՛ս ց. 2, գ. 1312, գ. 1327): 1956 թ. «Էջմիածին» հանդեսի N 6-ում (էջ 46-52) լույս տեսավ Վահան արեղա Գալանգարյանի «Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյանը Գևորգյան ձեմարանի աստվածաբանութեան դասախոս» հոդվածը, որտեղ փաստաթղթեր են հրատարակված Սանկտ-Պետերբուրգի պետական կենտրոնական արխիվից (ֆ. 821, վավ. 138, գործ 103, թ. 6-7, թ. 11-12, թ. 18, թ. 24-25):

գործունեությամբ: Վեց երկար ու ձիգ տարիներ այդ վանքում Օրմանյանը գործեց իբրև փոխվանահայր, իսկ Դուրյանը՝ իբրև դպրեվանքի տեսուչ. չնայած ուսուցման տարբեր ձևերին, անվանդած տարբեր առարկաներին, երկուսն էլ ձգտում էին իրենց սաների մեջ մտցնել որոնելու ձգտումը և վերլուծելու ընդունակությունը: Արմաշն արդարացրեց Օրմանյանի հույսերը: Դա նոր դպրոց էր հայ եկեղեցու գրկում: Ինչ փորձեց ստեղծել Էջմիածնում, հաջողվեց իրականացնել այստեղ՝ Արմաշում: 1895 թ. առաջին յոթ սաները վարդապետական աստենախոսություն ներկայացրին, մյուս տարի հինգ սան օծվեցին վարդապետ, իսկ 1897 թ. մի հոգի միայն մտավ հոգևոր ասպարեզ: Այդ 13 հոգևորականներն իրենք էլ կարողացան աճեցնել նոր սերունդ, որոնք հասան նվիրապետական բարձր պաշտոնների: Մակայն Երուսաղեմ աքսորված Իզմիրյան պատրիարքի փոխարեն պատրիարքական տեղապահ ընտրված Բարդուղիմեոս Չամիչյանը Ազգային ժողովի նախագահ Հովհաննես Նուրյանի հետ ձգտում էին փակել այդ հաստատությունը, մանավանդ որ դպրեվանքի հովանավոր Աբիկ Ունճյանը բանտարկված էր: Այդ ազգադավ գործիչների ցանկությունը չիրականացավ: Պատրիարքական ընտրությունների ժամանակ ի դերն էլան տեղապահի և Նուրյանի նկրտումները: Հարություն փաշա Տատյանի անմիջական նախաձեռնությամբ հրավիրված եկեղեցական համագումարը 1896 թ. նոյեմբերի 6-ին պատրիարք ընտրեց 55-ամյա Մաղաքիա Օրմանյանին:

Պատրիարքական ընտրությանը նախորդել էին մեր ժողովրդի համար դժնդակ օրեր: Արդուլիհամիդյան ճնշումներին զուգահեռ բարձրացել էր ազգային ազատագրական շարժումների ալիքը: 1894 թ. Մասունի ինքնապաշտպանական մարտերին հաջորդեցին տեղի հայության կոտորածները: 1896 թ. Վանի ինքնապաշտպանական մարտերին հետևեցին Վասպուրականի հայության կոտորածները: 1895-1896 թթ. Ջեթունի հերոսական ապստամբությունը մեծ տերություններին ստիպեց բանակցությունների քողի տակ միջամտել և փրկել Օսմանյան կայսրության հեղինակությունը: Հայության բարենորոգումների խնդիրը մեծ տերությունների և թուրքական պաշտոնյաների համար դարձել էր օրակարգի խնդիր: Դրանք իրականացնելու համար 1896 թ. նոյեմբերի սկզբին ՀՅԴ-ն կազմակերպեց օսմանյան դրամատան գրավումը, որին դարձյալ հաջորդեցին հայության կոտորածները: Ահա այդ պայմաններում Գաբրիել Նորատունկյանի, Տիգրան Յուսուֆյանի, անգամ բանտարկված Աբիկ Ունճյանի սատարումով 57 քվեարկողներից 47 քվեով Օրմանյանն ընտրվեց պատրիարք: Արդուլ Համիդը, որ տեղյակ էր 1880-ական թվականներին Օրմանյանի ազգասիրական գործունեությանը, իր կարծիքն է հայտնում նորընտիր պատրիարքի մասին. «Թող իւր ազգը սիրէ, բայց իրեն դեմ սուր չքաշէ»¹³: Տասնմեկ օր անց ընտրությունը վավերացվեց սուլթանի կողմից: Հայ ազգային կուսակցությունները, հիշելով «Պաշտպան հայրենյացի» օրերը, սկզբում նրա մեջ տեսնում էին իրենց գաղափարակցին,

¹³ Օրմանեան Մ., նշվ. աշխ., էջ 171:

իսկ սուլթան Համիդը միշտ կասկածով էր վերաբերվում նրան: Ուշադրության է արժանի մի հանգամանք. ժամանակի ընթացքում կուսակցական գործիչները հայ հանրությանը պատրիարքին ներկայացնում էին իբրև սուլթանի գործակից, իսկ Օրմանյանն իր բոլոր աշխատություններում բացահայտ գրում էր, որ կոտորածների կազմակերպիչը պետությունն էր, պետական աստյանները. «Կատարուած կոտորածները խաժամուժ ամբոխին կատաղութեան կամ վրեժխնդրութեան հետևանք չէին երբէք, այլ պարզապէս բարձրէն արձակուած հրամաններու գործադրութիւն էին և նույնիսկ մայրաքաղաքի մեջ կատարուած 1896 թ. օգոստոսի 14-ին կոտորածին գործադիրները՝ նույն օրեր Կ. Պոլիս բերուած Համիդիէ գունդին քուրդերն էին...»¹⁴: Պատրիարք ընտրվելուց հետո կոտորածի նոր փորձ տեղի ունեցավ Եվդոկիայում, 1897 թ. մարտի սկզբին: Նորընտիր պատրիարքը Ազգային վարչության համագործակցությամբ բողոքագիր ներկայացրեց կառավարությանն ու արքունիքին, որի հետևանքով Հասան Ֆեհմի փաշայի նախագահությամբ հանձնաժողով ստեղծվեց և Եվդոկիա ուղարկվեց, որը 72 թուրքի մեղադրեց և դատապարտեց: Նորընտիր պատրիարքի ազգանպաստ գործունեության հետևանքն էր թվով 1200 հոգու՝ բանտարկվածների և մահվան դատապարտվածների ընդհանուր ներում ստանալը, որոնց շարքում էին չորս անվանի հոգևորականներ՝ Եզնիկ եպիսկոպոս Ապահունի, Հակոբոս վարդապետ Շահպաղյան, Հուսիկ քահանա Քաջունի և Վահան քահանա Խոյյան, որոնց Օրմանյանը պարտավորվում է պահել պատրիարքարանի հսկողության ներքո: Ամենօրյա հարաբերություն պաշտպանելով Բ. Դոան և անձամբ սուլթանի հետ՝ պատրիարք Օրմանյանը գործի էր դնում բոլոր միջոցները, որպեսզի չկրկնվեն 1894-1896 թթ. իրադարձությունները, քանի որ փորձով համոզվել էր, որ «գոհուած երեք հարյուր հազար կեանքեր չէին կրցած ելոռպացիները շարժել և գործի մղել»¹⁵: Սուլթան Համիդի հակահայ գործողությունները զսպելու համար դիվանագետի՝ իր ցուցաբերած հատկությունները վկայում են նրա հեռատեսության մասին: 12 տարի պատրիարք լինելու ողջ ընթացքում Օրմանյանը հոգեբան փիլիսոփայի հմտությամբ բնութագրում է Աբդուլ Համիդի վարչական ընդունակությունների դրական և բացասական կողմերը: Վերջինս, որ գահ էր բարձրացել Աբդուլ Ազիզից և Մուրադից հետո, երբ նրանք հեռացվեցին պալատական հեղաշրջումների միջոցով, դարձել էր խիստ կասկածամիտ և բոլորի մեջ տեսնում էր իր դեմ դավադրություն լարողի: Ընդգծելով Համիդի վարչական կարողությունները, արտաքին հմուտ քաղաքականությունը, մեծ աշխատասիրությունը, խորաթափանցությունը՝ Օրմանյանը նշում է, որ կայսերական գահի երեք ոտքերը հաստատուն էին՝ մատնացույց անելով վերոհիշյալ առանձնահատկությունները: Գահի կաղացող՝ չորրորդ ոտքը Օրմանյանը համարում է հպատակ ժողովրդի նկատմամբ

¹⁴ Նույն տեղում, էջ 176:

¹⁵ Նույն տեղում, էջ 178:

ցուցաբերած վերաբերմունքը. կասկածոտ, անձնական կյանքի համար ծայրահեղության հասած երկչոտ սուլթանի քաղաքականություն էր. «Զսպել և միայն զսպել եղած է իւր ներքին կառավարութեան ոճը, շահիլ և սիրուիլ բոլորովին օտար էր իր միտքէն և այս էր կայսերական գահուն կաղացող չորրորդ ոտքը»¹⁶: Համիդը սարսափում էր, որ հայերն իր դեմ մահափորձ են կազմակերպելու օդապարհկով Յլդըզի մեջ իջնելու միջոցով և խուսափելու համար անընդհատ փոխում էր իր ննջարանը, ամրացնել էր տալիս պատուհանների վանդակները, բայց ոչ մի միջոց, այդ թվում նաև Օրմանյանի՝ նրան հանդարտեցնելու փորձերը չէին փոխում իրադրությունը: Հայերից զգացած երկյուղն այնքան մեծ էր, որ սուլթանն սկսում էր կասկածել նաև պատրիարքին, նրան անընդհատ պահում էր իր տեսադաշտում և առիթը բաց չի թողնում վերջինիս շքանշաններով պարգևատրելու՝ համակրանքը շահելու համար: Միաժամանակ, Համիդը շարունակում էր իր հակահայ գործողությունները. ճիշտ է, զանգվածային կոտորածները չեն կրկնվում, բայց սաստկանում էին հալածանքներն ընդհանրապես և մտավորականների նկատմամբ՝ առանձնապես. հարկերի բարձրացում, բուն Արևմտյան Հայաստանի հայության երթևեկության արգելքներ, մշակութային ընկերությունների գործունեության խափանում: Հաշվի չառնելով սուլթանի՝ պատրիարքի համակրանքը շահելու քաղաքականությունը՝ Օրմանյանը «երբեք չէր դադարեցրել զանգատի և բողոքի ձայնը բարձրացնել կեղեքիչ կարգադրութեանց դեմ և մինչև իսկ հրաժարականով քաշուելու յայտարարութեան դիմել, եթե պահանջուած դիտողությունները չհրամայուէին»¹⁷: Քանիցս պատրիարքը կրկնում էր իր հրաժարականները. 1899 թ. օգոստոսին տված հրաժարականի պատճառը համարելով այն, որ «հայերը բոլոր օրինական իրավունքներն և վայելումներն զրկուած են», նա հոկտեմբերին ներկայացնում է գրավոր հրաժարական՝ սկզբում արդարության և կրոնի նախարարություն, ապա արքունիքին: Ներքին գործոց նախարարը 1900 թ. ապրիլի վերջին Օրմանյանին կանչում է և հորդորում հետ վերցնել հրաժարականը: Պատրիարքը հրաժարականը հետ է վերցնում, որովհետև, ճիշտ է, բոլոր պահանջները չեն բավարարվում, բայց համեմատական փոփոխություններ են կատարվում. «գավառացի ազգայնոց կացութիւնը տանելի ըլլալու չափ բարվոքեցավ...»¹⁸: Մյուս հրաժարականի առիթը եղավ Կիլիկիայի կաթողիկոսի ընտրության հարցը: Գրիգոր Ալեաթճյանի ընտրությունը սուլթանը չվավերացրեց, իսկ նրա մահից հետո, երբ պետք է կատարվէին կաթողիկոսական նոր ընտրություններ, Բ. Դուռը, անձամբ սուլթանը հրահանգեցին Կիլիկիո աթոռը անկախ հայտարարել Կ. Պոլսո պատրիարքությունից, դրա միջոցով նաև՝ Ամենայն Հայոց կաթողիկոսի գերակայությունից: Այդպիսով թուլանում էր Ամենայն Հայոց կաթողիկոսի հեղինակությունը: Այդ նկատառումով էլ 1902 թ.

¹⁶ Նույն տեղում, էջ 184:

¹⁷ Նույն տեղում, էջ 193:

¹⁸ Նույն տեղում, էջ 197:

հուլիսին պատրիարք Օրմանյանը հրաժարական ներկայացրեց Բ. Դռանը: Բանակցություններ են սկսվում այդ հարցի շուրջ. դրանք ավարտվում են պատրիարքի հաղթանակով, և 1902 թ. օգոստոսի վերջին Օրմանյանը հետ է վերցնում հրաժարականը, որովհետև ճանաչվում են և՛ Կ. Պոլսո հայոց պատրիարքի, և՛ Ամենայն Հայոց կաթողիկոսի իրավունքներն ու գերակայությունը Կիլիկիո աթոռի վրա: Տեղի են ունենում կաթողիկոսական նոր ընտրություններ, և Երուսաղեմի լուսարարապետ Սահակ Խաչաթյան եպիսկոպոսն ընտրվում է Կիլիկիո կաթողիկոս: Օրմանյանը չորս անգամ հրաժարական ներկայացրեց կամ Բ. Դռանը, կամ սուլթանին: Դրանք նա համարում է բողոքի ցույցեր, «լարախաղացի հնարքներ, որ ստիպված էր հաճախ աճպարարության դիմել»¹⁹:

Սակայն այդ ընթացքում սաստկանում են կուսակցությունների, մանավանդ ՀՅԴ-ի հետապնդումները: 1903 թ. հունվարին նրա դեմ մահափորձ է կատարվում: Օրմանյանը դա համարում է տղայական ձեռնարկ, որպեսզի որևէ մեկը չտուժի դրանից, իսկ ՀՅԴ-ի պաշտոնական օրգան «Դրոշակը» դեպքը բնութագրում է որպես «անհատական նախաձեռնության արդյունք», որին մասնակից չէ որևէ կուսակցություն:

Օրմանյանի պատրիարքական երկարատև շրջանի գործունեության ամենամեծ արդյունքն արևմտահայության ազգային սահմանադրության պաշտպանությունն էր թուրքական կառավարության արգելական քայլերից: Կառավարությունը դեռևս Մատթեոս Իզմիրյանի, ապա Խորեն Աշրգյանի պատրիարքության շրջաններից առաջարկում էր վերաքննել Սահմանադրությունը՝ այն կասեցնելու միտումով: Հնարավոր և անհնար բոլոր միջոցներով գործող պատրիարքը դիմադարձ կանգնեց այդ քայլին. «Կառավարութեան զլխավոր նպատակն էր Քաղաքական ժողովը և մնայուն երեսփոխանութիւնը և ժողովրդական քուէով ընտրութիւնները ջնջել, սակայն մենք չիմանալու և չը կռահելու դեր կը պահէինք»²⁰: Տասներկու տարի անընդհատ Քաղաքական և կրոնական ժողովների հիմնական անդամների մասնակցությամբ ժողովներ գումարվեցին, որոնք կառավարությանը ներկայացվեցին իբրև հավաքներ՝ տարբեր առիթներով, ոչ թե Ազգային ժողովի նիստեր: Օրմանյանն իրավունք ուներ հայտարարելու. «Այսօր 12 տարի ետքը, Սահմանադրութիւնը ամբողջ պահած ըլլալու և անվնաս ազգին վերադարձրած լինելու գոհունակութիւնը կը զգամ»²¹:

Օրմանյանի պատրիարքության դժնդակ տարիներն ավարտվեցին 1908 թ. երիտթուրքական հեղաշրջումով: Սկզբում հավատալով երիտթուրքերի խոստումներին՝ «Ազատություն, հավասարություն, եղբայրություն» կարգախոսին, հայ ազգային կուսակցությունները, մանավանդ նախկին պատրիարք, արքայական

¹⁹ Միրունի Հ., Օրմանյան և իր ժամանակը (Էջմիածին, 1961, N Է, էջ 47):

²⁰ Օրմանեան Մ., նշվ. աշխ., էջ 208:

²¹ Օրմանեան Մ., Յիշատակագիրք երկու տասնամեա պատրիարքութեան, պր.1, Կ. Պոլիս, 1910, էջ 3:

Մատթեոս Իզմիրլյանը, որ արդեն վերադարձել էր Երուսաղեմից և դարձյալ վերընտրվել պատրիարք, Օրմանյանին ստիպեցին հրաժարական ներկայացնել, ավելի ճիշտ՝ Ընդհանուր ժողովը նախկին պատրիարքին հռչակեց հրաժարյալ և դատի ենթակա ամբաստանյալ: Երկու տարուց ավելի տևեց դատական քաջքշուկը: Այդ ընթացքում Ամենայն Հայոց կաթողիկոս ընտրված և օծված Մատթեոս Իզմիրլյանը վախճանվեց, և սկսվեցին կաթողիկոսական նոր ընտրություններ:

Թեև ամբաստանյալ, քաղաքական մեկուսացված կյանքով ապրող Մաղաքիա Օրմանյանն իրեն նվիրել էր գիտությանը, ազգի և եկեղեցու պատմությունը շարադրելուն: Երբ դեռ չէր կայացել Կ. Պոլսի Ազգային ժողովի դատավարության նիստը, Արևելյան Հայաստանում՝ Էջմիածնում, ծավալված կաթողիկոսական ընտրությունների թոհ ու բոհի մեջ կաթողիկոսական նոր ընտրելի է առաջադրվում նաև ամբաստանյալ պատրիարքը: Այդ հանդուգն և խիզախ քայլին դիմողը և թեկնածու առաջադրողն էր XX դ. մեր «Ղևոնդ երեցը»՝ մայիսյան հերոսամարտերի մասնակից Գարեգին վաղապետ Հովսեփյանը, որը մի քանի տարի անց ինքն ընտրվեց Կիլիկիո կաթողիկոս: Այդ քայլին նա ձեռնարկեց 1911 թ. Թիֆլիսում հրատարակած «Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանեան և կաթողիկոսական ընտրութիւն» գրքուկով, որում ըստ պատշաճի գնահատեց «մի բարձրաստիճան հոգևորականի, որ ծանր օրերի մեջ ցույց տուած իւր խելոք գործունեութեան համար արժանի էր երախտագիտութեան և շնորհակալութեան»²²: Դատապարտելով Կ. Պոլսի քաղաքական լրագրությունը՝ Գ. Հովսեփյանը Օրմանյանին ներկայացնում է իբրև «Գիտուն, քաղաքագետ, լեզվագետ, փորձառու, մեր եկեղեցու անցյալին և ներկա պահանջներին քաջ ծանոթ և գործունեության անսահման եռանդով լցված»²³ անձնավորություն: Երիցս իրավացի էր Գ. Հովսեփյանը:

Հասարակական կյանքից լիովին մեկուսացված Օրմանյանը ոչ թե հուսահատական ճիգեր էր անում իրեն արդարացնելու, այլ նվիրվել էր գիտական աշխատանքներին: 1909 թ. հունվարին ավարտեց «Համապատումը»՝ չորս Ավետարանների մեկնությունը, բացատրություններով, Պաղեստինի տեղագրական պատկերներով: Այն լույս տեսավ 1909 թ. փետրվարին: Հեղինակը «Համապատումի» նպատակ է համարում «Ավետարանը ժողովուրդին ընտելացնել»-ը²⁴: Գիրքը ժողովրդի մեջ լավ ընդունելություն գտավ: Օրմանյանը շարունակեց իր հոգևոր-մտավոր գործունեությունը: Հայ եկեղեցին եվրոպական հասարակությանը իսկապես ծանոթացնելու նպատակով նա ձեռնամուխ եղավ ֆրանսերեն աշխատություն պատրաստելուն՝ «Հայոց եկեղեցի» ընդհանուր վերնագրով, որը պարզ և ամփոփ պարունակելու էր նրա պատմությունը, վարդապետությունը, դավանությունը, բարեկարգությունը, վարչությունը և ներկա կացությունը: Հեղինակի նպատակն էր համաշխարհային հասարակությանը ներկայացնել հայոց եկեղեցու «ազատախոհութիւնը, իբրև տիպար մը, որ կրնա ըլլալ բաժանեալ եկեղեցիներու միութեան մոտենալու»²⁵: Գիրքը լույս տեսավ Փարիզում՝ հայտնի հայագետ Ֆրեդերիկոս

²² Էջմիածին, 1961, N Ե, էջ 22:

²³ Նույն տեղում:

²⁴ Օրմանեան Մ., Խոհք և Խօսք, էջ 296:

²⁵ Նույն տեղում:

Մակլերի միջնորդությամբ, հրատարակիչ Էռնեստ Լըրուի կողմից: Աշխատության առաջաբանը գրել էր ֆրանսիացի գիտնական Բերտրան Բարեյլը, որն ըստ արժանվույն գնահատելով այդ աշխատությունը՝ իր հիացմունքն է արտահայտում հեղինակի մտքի ազատության վերաբերյալ՝ գտնելով, որ այն «զարմանք կը պատճառե եվրոպացի ընթերցողներու, որոնք վարժ չեն այդչափ ազատութեամբ գրող եկեղեցականներու հանդիպիլ»²⁶: Այնքան մեծ էր գրքի ազդեցությունը Եվրոպայում, որ այն թարգմանվեց և հրատարակվեց նաև անգլերեն, ռուսերեն, ապա հեղինակն այն թարգմանեց հայերեն, որն ունեցավ երեք հրատարակություն: Այդ աշխատությամբ «Հայոց եկեղեցվոյն արժանիքը բոլոր լուսավորեալ և գիտական աշխարհի մեջ տարածուեցավ»²⁷: Այս գիրքը ևս դասվեց Հռոմի պապի արգելած գրքերի շարքը (1911 թ. ապրիլ), դրանով ավելի բարձրացնելով աշխատության հեղինակությունը:

Մինչ հեղինակը զբաղված էր այսպիսի ուսումնասիրություններով, Կ. Պոլսի Ազգային ժողովի քննիչ հանձնախումբը շարունակում էր Մաղաքիա Օրմանյանի գործի քննությունը: 1908 թ. նոյեմբերից մինչև 1910 թ. հոկտեմբեր քննությունը քաջքշելուց հետո հանձնաժողովը 1911 թ. հուլիսին նոր ամբաստանություն ներկայացրեց Ատենապետաց դիվանին. այն դարձյալ ձգձգվեց մինչև 1912 թ. վերջը: Օրմանյանի ամբաստանության հարցի քննարկման ժամանակ դատապաշտպանի դեր ստանձնեց Գրիգոր Ջոհրապը, որն, իբրև հմուտ իրավաբան, պաշտպանեց Օրմանյանի իրավունքները՝ ինքն իր կողմից դատապարտելով Ազգային ժողովի բոլոր անդամներին, որ այդ ազատության ժամանակաշրջանում (ակնարկում է երիտթուրքական հեղափոխությունը), երբ հինգ տարի Սահմանադրությունը գործադրելու իրավունք ունեն, արդյո՞ք նրա «տարրական և հիմնական պայմանները հարգված են»²⁸: Ջոհրապի պաշտպանական ելույթն այնքան տպավորիչ էր, որ Օրմանյան սրբազանը անպարտ հոչակվեց: 1913 թ. մարտին Օրմանյանը եկեղեցական երեսփոխան ընտրվեց, իսկ 1914 թ. ապրիլին՝ առաջին ատենապետ, բայց չհասցրեց պաշտոնավարել, որովհետև Կ. Պոլսից հեռացել էր: Նույնիսկ տարբեր գավառներում (Ադանա, Եգիպտոս) հոգևոր առաջնորդի պաշտոն վարելու առաջարկություններ եղան, սակայն Օրմանյանը զերադասեց գիտական գործունեությունը: Դա դարձավ սրբազանի իրական դափնեպսակը: Օրմանյանն սկսեց «Ազգապատումը»՝ հայ եկեղեցու և ազգի «զուգընթաց պատմությունը», որը գրել ձեռնարկեց 1910 թ. վերջերին: Առաջին հատորը լույս տեսավ 1912 թ. սեպտեմբերին: Այդ ժամանակի համար արտակարգ մի աշխատություն էր դա, որն այսօր ևս պահպանում է գիտականության բարձր մակարդակը՝ օգտագործված աղբյուրների և հեղինակների նշումով հանդերձ: Այսօր էլ այն զարմացնում է իր

²⁶ Օրմանեան Մ., Հայոց եկեղեցին, Փարիզ, 1909, էջ 14:

²⁷ Օրմանեան Մ., Խոհք և խօսք, էջ 298:

²⁸ Էջմիածին, 1961, N 5, էջ 2:

ընդգրկումով և խորությամբ: Չարմանում էս, որ նման մակարդակի և ծավալի աշխատանք կատարել է մի անհատ, ոչ թե գիտական մեծ հաստատություն: Երկու հատորը միասին կազմում էին 3400 էջ. պատմությունն սկսելով Քրիստոսի ժամանակներից՝ հեղինակն այն հասցնում է մինչև 1808 թ.: Դանիել Սուրմառեցի կաթողիկոսի մահը: Երրորդ հատորը հեղինակը ծրագրել էր հասցնել մինչև 1909 թ.: Մատթեոս Իզմիրլյանի կաթողիկոսության սկիզբը: Սակայն Ազգային ժողովը նրան հանձնարարեց մեկնել Երուսաղեմ՝ պատրիարքության գործերն ուսումնասիրելու: Այդ խնդրով նա զբաղվել էր դեռևս պատրիարքության տարիներին, մինչև հրաժարական տալը: 1908 թ. մինչև 1914 թ. ամբաստանյալ Օրմանյանը բոլորովին չի զբաղվում այդ խնդրով: 1914 թ. Երուսաղեմում նա քննարկում է զեղծումների բազմաթիվ հարցեր՝ դրա հետ միասին զբաղվելով իր ամենասիրելի գործով. տեղի «Ժառանգավորացում» դասախոսում է Ավետարանի ներածություն, տրամաբանություն և հոգեբանություն, բնական և ջատագովական աստվածաբանություն, դրա հետ միասին սկսում է «Ազգապատումի» Գ հատորի աշխատանքները: Շարադրանքն ընդհատվում է, որովհետև հեղինակի տրամադրության տակ համապատասխան աշխատություններ և աղբյուրներ չկային:

Օրմանյանը Երուսաղեմում էր, երբ սկսվեց Առաջին աշխարհամարտը, որի ընթացքում տեղի ունեցավ հայ ժողովրդի ամենամեծ ողբերգությունը՝ ցեղասպանությունը: Կյանքի վերջին տարիներին գրված «Խոռք և խօսք»-ի մեջ Օրմանյանն արտակարգ ճիշտ գնահատական է տալիս ռուս-թուրքական պատերազմի կովկասյան ճակատում կատարվող ռազմական գործողություններին, հայերի նկատմամբ իրագործված բռնություններին: Նա ապացուցում է, որ թուրքական կառավարությունն իր պետության մեջ գործեց ամենամեծ սխալը. «Հայը Թուրքիոն անհրաժեշտ տարրն է... Թուրքիոն գավառները շենցնողը, հողը մշակողը, առևտուրը ապահովողը հայն է եղած և հայն է տակավին, հայը Թուրքիայեն պակսեցնողը Թուրքիոն ռիսերիմ թշնամին կրլլա: Թիրքիա իւր իսկ ինքնութիւնը կը վտանգե, երբ հայը կը ջնջե»²⁹:

Պատրիարքության հոգևորականների հետ Օրմանյանն արստրվեց Դամասկոս, որտեղ էլ ավարտեց իր «Խոռք և խօսքը»: Այն, ինչպես նաև «Ազգապատումի» Գ հատորը հրատարակվեցին հետմահու: 1918 թ. մայիսի վերջերին Կ. Պոլիս վերադառնալու հնարավորություն է ստեղծվում: Նոյեմբերի 19-ին 78 տարեկան Մաղաքիա Օրմանյանը կնքում է իր մահկանացուն. ավարտվում է մի փոթորկոտ կյանք, սակայն ողջ հայությանը և քաղաքակիրթ քրիստոնյա աշխարհին մնում է նրա թողած պատմագիտական, հոգևոր-իմաստասիրական մեծ ժառանգությունը: Եթե չթվարկենք նրա հրատարակած բազմաթիվ հոդվածները, այլ նշենք միայն ծավալուն աշխատությունները, ապա «Ազգապատումի» երեք հատորները, «Հայոց եկեղեցին» աշխատության՝ տարբեր լեզուներով հրատարակությունները, 12-ամյա պատրիարքության «Հիշատակագիրքը», «Խոռք և խօսքը» հնարավոր չէ պատկերացնել, որ դրանք պատկանում են մի հոգևորականի գրչին: Իր կատարած անխոնջ աշխատանքը ժամանակակիցները և հետագա սերունդը գնահատել են ըստ արժանվույն, իսկ հասարակական

²⁹ Օրմանեան Մ., Խոռք և խօսք, էջ 337:

գործունեությունը ժամանակակիցների կողմից արժանացել է երկակի՝ հակասական գնահատականների. նաև՝ բարձր է գնահատվել, և՛ այսպեսով:

Անցել են ժամանակներ, և 170 տարի հետո նոր սերունդը պարտավոր է արժևորել հայոց եկեղեցու և հայոց պատմության անխոնջ հետազոտողին: Առաջին փորձն արվել է 1961 թ. և 1962 թ., երբ «Էջմիածին» հանդեսում լույս է տեսել Հակոբ Միրունու «Օրմանյան և իր ժամանակը» աշխատությունը: Չնայած իր բարձր արժանիքներին, վերոհիշյալ աշխատության մեջ առավել քննում են նրա գործունեության տարբեր շրջափուլերը: Դեռևս քննարկման և վերլուծության չեն ենթարկվել նրա գիտական ծանրակշիռ գործունեությունը և թողած ժառանգությունը: Ուստի ուսումնասիրողները պարտք ունեն հատուցելու անխոնջ ազգային-հոգևորական գործչի, հայոց եկեղեցու նվիրյալ որդու, մեծ քաղաքացու, գիտնականի և հայրենասեր հայի հանդեսը:

ВЫДАЮЩИЙСЯ ДЕЯТЕЛЬ АРМЯНСКОЙ ЦЕРКВИ И УЧЕНЫЙ

(К 170-летию со дня рождения Магакии Орманяна)

КОСТАНДЯН Э. А.

Резюме

Выдающийся общественно-политический деятель конца XIX – начала XX вв., патриарх константинопольских армян М. Орманян способствовал укреплению армянской церкви и поддерживал освободительное движение в период деятельности каринской организации “Защитник родины” (начало 1880-ых гг.). В меру своих возможностей патриарх М. Орманян сдерживал крайние проявления антиармянской политики Абдул Гамида откровенными патриотическими действиями, которые впоследствии спасли его от необоснованных обвинений. М. Орманян – крупный исследователь истории армянского народа и, в частности, армянской церкви. В этой области особо следует выделить его работы “Амапатум” (“Универсальная история”) и трехтомник “Азгапатум” (“История нации”). Его многогранная деятельность и весомое научное наследие все еще ждут своего исследователя.